ԱՏԱՄՆԵՐԻ, ԱՏԱՄՆԱԾԱՐԻ ԵՎ ԿԾՎԱԾՔԻ ԱՆՈՄԱԼԻԱՆԵՐԻ ԴԱՏԱ-ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ռոմոդանովսկի Պ.Օ., Մանին Ա.Ի., Բիշարյան Մ.Ս., Սահդով Մ.Տ.

Մոսկվայի պետական բժշկական ատամնաբուժական համալսարան, Մոսկվա, Ռուսաստան
Երևանի Մ.Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի դատական բժշկության ամբիոն
Մոսկվայի պետական բժշկական ատամնաբուժական համալսարանի ընդհանուր պրակտիկայի և ատամնատեխնիկների վերապատրաստման ամբիոն, Մոսկվա, Ռուսաստան

Հոդվածում տրվում են տեղեկություններ ՌԴ տարբեր տարածաշրջանների բնակչության և էթնոռասային խմբերի ատամնածնոտային համակարգի անոմալիաների տարածվածության ձևի, դրանց մեթոդների որոշակիության, ատամների, ատամնաշարի և կծվածքի անոմալիաների դասակարգման մասին:

Ատամներին, ատամնաշարին և կծվածքին են վերագրվում խանգարումներ, որոնք առաջացել են ատամնածնոտային համակարգի ձևավորման ժամանակ:

Սովորաբար ատամների անոմալի համարվում է դրանց ձևը, կառուցվածքը, գույնը, չափը, քանակը, ատամների դիրքն ու ծկլթման ժամանակը:

Ատամների չափերի անոմալիաներ համարվում են չափից ավելի մանր կամ խոշոր ատամները. ավելի հաճախ այդպիսին նկատվում են կտրիչներում և ժանիքներում. առանձին ատամների անոմալիաներ լինում են ատամի շրջանի աղեղի շրջադարձում. թեքվածություն դեպի այտեր, շրթունքներ, լեզու, ծնոտային աղեղի վրա ատամների խառնվածություն, ատամների ցցվածությունը դեպի ծամիչ մակերես, ատամների ցածր դիրքը (երբ դրանք չեն հասնում ծամիչ մակերեսին):

Ատամների դիրքի անոմալիաները բաժանվում են երկու խմբի.

1) Ատամների ատամնախոռոչում դասավորվածությունը, տեղի վրա դրանց անհամատեղելիությունը. այդ տեսակի անոմալիաներին են վերագրվում ատամների միախառնվածությունը, աղեղի շրջանում դրանց ուղղահայաց շրջվածությունը. միախառնվածության դեպքում երկու հարևան ատամները տեղերով փոխվում են. սովորաբար դրանց միախառնվածությանն են ենթարկվում վերին կտրիչները, որոնք կողքային կտրիչներով կամ առաջին փոքր արմատային ատամներով փոխվում են տեղերով. ավելի հաճախ դիտարկվում են վերին երկու կտրիչների և ծամիչների ուղղահայաց աղեղի շրջանում, քիչ՝ փոքր արմատային և ներքին ծամիչների շրջանում:

2) Ատամների դասավորվածությունը ատամնախոռոչից դուրս (ծնոտային աղեղում, կարծր քիմքում, քթային խոռոչում, ծնոտի կողքային շրջանում և այլն):

Հետազոտված են ծնոտի վերին և ներքին ատամների գիպսային մոդելը և ռենտգեն նկարները: Կատարված է հետազոտություն ինչպես կենդանի անձերի, այնպես էլ դիակների վրա: Պոստմորտալ շրջանում անցկացվել է հետազոտություն՝ատամների գունային բնութագրի փոփոխության դինամիկայի և ատամնածնոտային ֆրագմենտի վերաբերյալ:

Ատամների, ատամնաշարի և կծվածքի մասին բոլոր այդ վկայությունները կարելի է օգտագործել անհատի նույնականացման համար՝դատական բժշկության բնագավառում:

Ինչպես ցույց են տրվել հետազոտության արդյունքները՝ ստացված ՌԴ տարբեր տարածաշրջաններից, առանձին ատամների անոմալիաների տարածվածությունը հիմք է ստեղծում փորձա-նույնականացման հետազոտության վերապատրաստման համար: Առանձին չափանիշներով պոպուլյացիոն-դեմոգրաֆիկ կառուցվածքով հաստատված կապը հնարավորություն է բացում պոպուլյացիոն հաճախականության հավանական կանխատեսման և առանձին տարածաշրջաններում անոմալիաների առանձնահատկությունների մասին:

OFFICIAL PUBLICATION OF THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY